ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.

(«ԱՐԱՐԱՏ», ՀԵՌԱԳԻՐ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ)

(28 *Մայիսի*, 10 *ժ.* 40 *ր. առաւ.*).

Մայիս 22-ին տաճարումն աղօթելուց յետոյ Վեհափառ Հայրապետը դուրս եկաւ 'Նոր 'Նախիջևանից. ժողովրդեան մի յոգնախուռն բազմութիւն ուղեկցում էր 'Նորին Սրբութեանը մինչև Ռոստովի երկաթուղու կայարանը: Մոսկուայի Հայերը, որոնց կողմից մի յատուկ պատգամաւորութիւն էր եկած 'Ն. 'Նախիջևան, արտակարգ գնացք էին պատրաստել Հայրապետի համար: Հոգեմբենայի վերջին սուլոցի հետ միասին հազարաւոր ձայներ թնդացրին օդը, «կեցցէ Հայրիկ» աղաղակելով: 'Ն. 'Նախիջևանի կայարանում Հայրապետական գնացքը կանգ առաւ քառորդ ժամով. այստեղ Հայրիկին ողջերթ մաղթելու և 'Նորա օրհնութիւնն առնելու համար ժողովուած էին արդէն 'Նախիջևանի բոլոր դպրոցների աշակերտներն իրանց տեսուչներով, հոգաբարձուներով և ուսուցիչներով հանդերձ, այլ և մի ահագին բազմութիւն ժողովրդեան, որ ցնծագին աղաղակներով դիմաւորեց և ճանապարհ ձգեց Վեհափառին:

Կամենսկայա կայարանում 'Նորին Օծութեանը ազուհաց մատուցուեցաւ արծաթի սկուտեղով:

Միխայլովկա կայարանում, յաջորդ օրը, դիմաւորեց Վեհափառ Հայրապետին մի պատգամաւորութիւն, որ եկած էր Վ. օրօնժից. այդ օրը 'Նորին Սրբութիւնը բարեհաճեց գիշերել Բեաժակում: Մայիսի 22-ին Բեաղանում ողջունեցին Հայրապետի շնորհաբեր գալուստը Մոսկուայի Հայ հասարակութեան կողմից եկած յատուկ պատգամաւորները: Մոսկուայի 'Նիկոլայևսկի երկաթուղու կայարանում Վեհափառ Հայրապետը հանգիստ առաւ երեք ժամ: Հայտեղ մի վերին աստիճանի սրտառուչ և շքեղ ընդունելութիւն տեղի ունեցաւ. ներկայ էին գրեթէ բոլոր Հայ հասարակութիւնը, Լազարեան Շեմարանի սաներն իրանց վերատեսչի և ուսուցիչների հետ միասին, զանազան ուսումնարանների ուսանողներ և այլն: Հայրապետը գիշերեց Ռօլօգոյէ կայարանում: Լիւբանում դիմաւորեց 'Նորին Վեհափառութեանը Պետերբուրգի պատգամաւորութիւնը: Ժամի 2-ից կէս անցած Մայիսի 25-ին, Հայրապետական գնացքը հասաւ Պետերբուրգ, ուր նոյնպէս խիստ սրտառուչ էր ընդունելութիւնը: Հանդիսաւոր գնացքը երկաթուղու կայարանից մինչև Հայոց եկեղեցին մի գեղեցիկ տեսարան էր ներկայացնում: Եկեղեցում Իւր սովորական աղօթքն անելուց յետոյ Վեհափառ Հայրապետը նոյն հանդիսաւորութեամբ շարունակեց Իւր ճանապարհը մինչև Միլիոննայա փողոցը, ուր 'Նորին Սրբութեան համար փառաւոր օթեան է պատրաստուած մի հոյակապ տան մէջ: Վեհափառի բարի գալուստը շնորհաւորեց դեսպարտամենտի տեսուչ Մոսլովը ներքին գործոց պ. Նախարար Դուրնովոյի կողմից, Պետերբուրգի քաղաքապետը (градоначальникъ), բոլոր բարձրաստիճան հայերը, ի թիւս որոց և գեներալ Ալխազեանը: 'Նորին Մեծութեան Թագուհի Կայսրուհու ծնունդեան տօնի առթիւ, Վեհափառ Հայրապետը շնորհաւորական հեռագիր ուղղեց Կայսերն ու Կայսրուհուն, որոնք բացակայ են մայրաքաղաքից: 'Նոյն օրը ստացուեցան 'Նոցին Մեծութեանց շնորհակալու-

թեան պատասխանները հեռագրով։

Մայիսի 26-ին Նորին Օծութիւնը այցելեց Պետրոպաւլովսկի տաճարը, ուր ի Տէր հանգուցեալ Կայսեր գերեզմանի վրայ հոգոց ասաց։ Յաջորդ օրը, մայիսի 27-ին, Վեհափառին այցելութեան եկաւ ազգային լուսաւորութեան նախարար կոմս Դելեանեանը. նոյն օրը Նորին Սրբութիւնը բարեհաճեց այցելել ներքին գործոց նախարար Դուրնովոյին, որ շուտով փոխ այցելութեան եկաւ Վեհափառ Հայրապետին։ Ապա Նորին Օծութիւնն ինքը գնաց այցելութեան կոմս Դելեանեանին, որի հետ երկարատև խօսակցութիւն ունեցաւ։

Վեհափառ Հայրապետը ներկայ էր երեկոյեան ժամասացութեանը։

* *
*

ԱԶԳԻՍ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԵՐԿԱՅԱՆԱԼԸ

ՆՈՅԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆՑ

(«ԱՐԱՐԱՏԻ» ՀԵՌԱԳԻՐ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ։)

(31 Մայիսի, 5 ժ. 10 ր. կը.)։

Մայիսի 31-ին, առաւօտեան 10 ժամին, ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆԸ Իւր շքախմբի հետ միասին ուղևորուեցաւ Պետերհօֆ՝ ՆՈՅԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆՑ ներկայանալու։ Խալտեան երկաթուղու կայարանի Աքքայական սենեակներում դիմաւորեցին Վեհափառ Հայրապետին Կայսերական Տան արարողապետը՝ գաւազանը ձեռին և արարողութեանց վարչութեան տեսուչը։

Նորին Սրբութեան համար պատրաստուած էր սալոն—վագոն, իսկ շքախմբի համար առաջին կարգի վագոն։ Ժամի 11-ին հայրապետական գնացքը ժամանեց Պետերհօֆ։ Կայարանում արդէն պատրաստուած էին պալատական կառքեր. Նորին Օծութեան համար յատկապէս պատրաստուած էր ի Տէր հանգուցեալ Ալէքսանդր Գ. Կայսեր պատմական հանդիսական կառքը վեց սպիտակաթոյր նժոյգ լծած, զոյգ զոյգ միմեանց առաջից։ Վեհափառի կառքի առաջից տանում էին Հայրապետական Խաչն ու Գաւազանը, իսկ կառքի յետևից գնում էին Նորին Սրբութեան գաւազանակիրը և Կայսերական ախոռատան չորսհնծեալ ձիապան իրենց սպայի հետ։

Ընդունելութիւնը տեղի ունեցաւ մեծ պալատում. ունկնդրութիւնը տևեց քսան րոպէ. Վեհափառ Հայրապետը մատոյց ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆԸ, ուղերձ, որ ԹԱԳԴԻՒՈՐ ԿԱՅՍՐՆ ընդունեց բարեհամբոյր հաճութեամբ։ ՆՈՅԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆՑ ներկայանալու բաղդ ունեցաւ նաև Վեհափառ Հայրապետի շքախումբը։ Նորին Սրբութիւնը հրաւիրուեցաւ Կայսերական պալատում պահոց նախաճաշի սեղանի։

Ժամի 2-ին Վեհափառ Հայրապետը նոյն հանդիսաւոր կարգով վերադարձաւ Պետերբուրգ։

*
* *

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՍԻՆՕԴԻՆ.

(1 Յունիսի, 2 ժամին)

Շտապում եմ ինձ ուրախակից անել ձեզ. պատիւ ունեցայ ներկայանալու ՆՈՅԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆՑ Պետերհոֆի պալատում և արժանացայ ողորմած ընդունելութեան։

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԵՐՑՆ ՀԱՑՈՑ.